



Հակոբ Պարոնյան

Պտոյտ մը Պօլսոյ թաղերու մէջ

Լ, ԼԱ, ԼԲ

Լ.

ՆԱՐԼԸ ՔԱԲՈՒ

Աղքատ թաղ մ' է :

Ժամանակաւ քանի մը հարուստ վաճառականներ իրենց մէջ հոգաբարձութիւն մը կազմելով՝ թաղին վարժարանը կկառավարէին. իսկ մէկ-երկու տարիէ ի վեր այդ հոգաբարձութիւնը լուծուած է, եւ թաղեցին ինք իր գլխուն կկառավարէ իւր վարժարանն, որ ինչպէս յայտնի է՝ նախանձելի վիճակ մը չկրնար ունենալ, թաղային վարժարան մ' ըլլալուն պատճառաւ :

Այս թաղին եկեղեցոյն ժամակոչներն այնքան արթուն անձեր են, որ ուրիշ թաղերու գողերուն եթէ եկեղեցական անօթ պէտք ըլլայ՝ թաղիս եկեղեցիէն կ' առնեն կտանին :

Թաղիս մէջ դրամով հարուստ ազգային չկայ, բայց սրտով ամենն ալ հարուստ են: Իրենց պարտաւորութիւնը կճանաչեն՝ եթէ իրենց ներկայացունես զայն, եւ ազգօգուտ ձեռնարկութիւններու համար իրենց լուծան չեն մերժեր :

Թաղս ծովեզերեայ ըլլալով՝ թաղեցին լաւ լողալ գիտէ ... օղիի մէջ :

Կիները աշխատասեր են եւ եթէ պատուհաններուն նայիս՝ հոս ամեն օր լաթ կը լուան. վասնզի իրենց տանը պատուհաններէն ամեն օր ճերմակեղէն կախուած են :

Օդը մեղմ է, թաղեցոյն բնատրութեանը պէս. իսկ երբ հարաւը փշէ եւ ծովն ալէկոծ է՝ թաղեցին ալ ծովուն հետ կկորուսնէ իւր հանդարտ բնատրութիւնը եւ ալիքներուն պէս կկատաղի :

Այս միջոցին Նարը քաբուցիի մը առջեւէն մի քալեր փողոցի մէջ. գրեց կտապալէ եւ կ'անցնի կ'երթայ ալիքի պէս:

ԼԱ.

ՊԷՅՔՕՁ

Կեցցէ՛ Սահմանադրութիւն ... :

«Արի՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք,

Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք »:

Առաջին անգամ Պէյքօզի մէջ արտասանուեցան վերոյիշեալ խօսքերն. բայց չորս-հինգ տարի կայ, որ բարեւը կտրեցինք Պէյքօզին եւ ազգային յիմարանցին առջեւ կու տանք Սահմանադրութեան մեր բարեւը :

Շատ նշանաւոր եղած է Պէյքօզ սահմանադրութեան տարեդարձային այն հանդէսներով, որք տեղի կ'ունենային իւր դաշտավայրին վրայ, ուր կհաւաքուէին ազգասէր հայերն եւ իրարու բերնէն կյափշտակէին ճատերը, գինիի գաւաթներն եւ Սահմանադրութիւնը:

Բնաւ նշանաւոր եղած չէ իւր վարժարանովն, որ հեռի է աշակերտները գոհացնելէ :

Թաղային կոիւներն երբեմն յերեւան կու գան եւ քանի մը շաբաթներ պտրտելէն ետքը աներեւոյթ կ'ըլլան, վերստին երեւնալու համար :

Թաղեցոյն մեծ մասն անհոգ է եկեղեցոյ եւ վարժարանի մասին.
երիտասարդութիւնն երբեմն կաշխատի, որ բարեկարգութիւն մտցունէ
վարժարանին եւ թաղականին մէջ. սակայն բարեկարգութիւնն առանց դրամի
չըլլար, եւ մեր երիտասարդութիւնն ալ դժբախտաբար առանց դրամի կ'ըլլայ :

Նաւավարներ եւ ձկնորսներ առատ են: Ասոնք սքանչելի գինի կխմեն եւ
պատուական ալ ձուկ կ'ուտեն գինոյ վրայ: Նախանձ եւ ատելութիւն չկայ
իրարու մէջ. ամենքը սիրով կը վարուին միմեանց հետ, եւ միշտ այսպէս սիրով
մնալու համար ուխտ ըրած են, որ չխօսին թաղային խնդիրներու վրայ, որոնցմէ,
կ'ըսեն, միշտ վնասուած է իրենց բարեկամութիւնը :

Կիները տան գործերով կգբաղին. քիչով գոհ կ'ըլլան եւ մեծ պահանջումներ չեն
ըներ: Պարկեշտ եւ հաւատարիմ են, բայց կգտնուին հարկաւ այնպիսուի ներ ալ,
որք իրենց ամուսիններէն երբեմն ապտակ կ'ուտեն՝ ընդդիմախօս գտնուելուն
համար :

Պէյքօզին օդն ալ միշտ գովեստներով կյիշուի ... ընդհանրապէս ամեն թաղին
օդը, որչափ ալ գէշ ըլլայ՝ միշտ այն թաղին վարժարանէն լաւ է :

ԼԲ.

ՄԱՔՐԻ ԳԻՒՂ

Այս գիւղին մէջ միշտ փափագ մը կը տեսնուի յառաջադիմութեան, բայց
յառաջադիմութիւն բնաւ չտեսնուիր:

Տասը տարիէ հետէ ամեն շանք ի գործ կդնեն իրենց վարժարանը բարեկարգելու
համար, սակայն վարժարանը բարեկարգութեան երես չտեսներ: Այս օրերս
վարժարանի հոգաբարձութիւնը հրաժարական տուաւ իւր պաշտօնէն, գոր
ուրիշներն ստանձնել կ'ուզեն եւ չեն յաջողիր: Վարժարանը բարեկարգելէն
առաջ թաղեցոյն սիրտը բարեկարգելու պէտք կայ :

Եկեղեցասիրութիւնն հագուագիտ է թաղիս մէջ. ժամկոչը ուրիշ թաղերէն մարդ
կը կանչէ եկեղեցոյն :

Բնիկ գեղացին արհեստավոր է եւ վարժարանի վերաբերեալ խօսքերուն մէջ բնաւ չխառնուիր: Կգտնուին հոս վաճառականներ, որք ուրիշ թաղերէ եկած են հոս, կա՛ն օղափոխութեան համար կամ իրենց պարտատէրներուն շերելալու համար :

Գեղիս գլխավոր գբօսավայրն է Սաքրգ աղաճի կոչուած գբօսավայրն, ուր սիրահարութեան դէպքեր շատ կպատահին :

Գեղիս մէջ ջուր չկայ. ուստի հոս կրնան երթալ այն ծնողներն, որք կը վախնան, թէ իրենց տղաները ջուրի մէջ կ' իյնան եւ կխղդուին. վասնզի խմելու իսկ ջուր չգտնուիր. երբեմն ծովուն ջուրը կխմեն ... լողալ սորվելու համար ծովը մտնողները

Գիղիս հայ տուններուն թիւը որոշ չգիտցուիր. վասնզի օրէ օր աւելնալու վրայ է, ինչպէս նաեւ ազգասէրներու թիւն, որ վայրկենէ վայրկեան պակսելու վրայ է :